

ցգաւրաւարն Յայոց ցտերն Մամիկոնենից¹ Վահան, եւ աջով հզաւրին Աստուծոյ մարգպան զնա² ի վերայ աշխարհին Յայոց կարգեալ հաստատէին:

3 Իսկ տերն Մամիկոնենից Վահան, զաւրաւարն Յայոց եւ մարգպան, ընկալեալ զհրովարտակն մարգպանութեանն ի ձեռաց դեսպանին, թեպէտ եւ զխանտածութիւն Յայ մարդկան ճանաչելով ծանրանայր ընդ իրս՝ այլ սակայն եւ ոչ ընդդիմանալ հրամանի թագաւորին իշխեր³ եւ անհնազանդ լինել: 4 Առեալ զհրովարտակն՝ խնդրէր վաղվաղակի անդրուվար՝ երթալ⁴ ի տունն Աստուծոյ: 5 Եւ լուեալ զայս մարդկանն որ ի քաղաքին էին⁵, գրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նախարարաց եւ ազատաց, ոստանկաց եւ ռամկաց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, այլ եւ հարսունք անգամ յառագաստաց, մոռացեալ առ վայր մի առ խնդին զամաւթ հարսնութեան՝ դիմեալ ընթանային յեկեղեցին: 6 Եւ ոչ բաւեալ⁶ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն եւ փողոցք եւ ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի: 7 Եւ էր այն աւր անյազ խնդութիւն եւ անսպառ ուրախութիւն աստուածասէր բարեսիրացն եւ ողջախորհուրդ մտաց լաւահայեցաց⁷, եւ սուգ թախանձալից եւ տրտմութիւն անմխիթար՝ խաւթամտացն եւ խարդախաց:

8 Եւ սրբոյ կաթողիկոսին Յայոց Յովհաննու տեսեալ զանկարծելի աւետաւորութիւնն, շնորհեալ յԱստուծոյ ի ժամանակս երանելոյն, բերկրեալ ցնծալից սրտիւ՝ տայր սաղմոսել ի ժամուն. *Յեկեղեցիս աւրինեցէք զԱստուած, եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի*^ա. եւ կարդացմունս հրամայէր՝ զտեղի ելիցն Իսրայէլի ի ծառայութենէն Փարաւովսի, եւ ի Թագաւորութենէն՝ զընթերցումն՝ ուր թագաւորեցոյց Դաւիթ զորդին իւր զԱողոմոն: 9 Եւ եկեալ ինքն ի տեղի լսողութեանն աստիճանին, եւ տուեալ զխաղաղութեան ողջոյնն՝ ասէ⁸.

Ը. «Բազում կերպարանաւք եւ ազգի ազգի ցուցակութեամբք Փրկիչն մեր եւ տէր Յիսուս Զրիստոս զիւրոյ գալստեանն եւ մարդանալոյն ի սուրբ եւ յաստուածածին կուսէն ծրագրեալ՝ յայտաբերէր մեզ զաւրինակն ի սկզբանէ.- մօրենեան՝ զերանելի կոյսն, եգիպտական նշանագործու-

1 Ձ. տերն մամիկոնենից

2 ՏՏ. չիք զնա

3 Ձ. իշխէր (չ-ն նոր գրած, վերելից)

4 Ձ. երթեալ

5 ՏՏ. չիք էին

6 Ձ. բաւել

7 Ձ. լաւահայեաց

ա Սաղմ. ԿԷ 27

8 ՏՏ. եւ ասէր